Արձանագրություն N 4
ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/20 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
«Էլեկտրական ապրանքների և պարագաներ»

ք. Երևան 27 օգոստոս 2025թ
ժամը 09:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Հարությունյան
անդամներ՝ Սմբատ Այդինյան
Աննա Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռոզա Մեհրաբյան

1. Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Գ.Հարությունյան)

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/20 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին՝ բացառությամբ

ՊՐՈՎԱՏՏ ՍՊԸ-ի, որի հայտում՝

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (հավելված 1.3) նշված կայքէջի հղումը չի պարունակում պահանջվող տեղեկատվությունը,
- 20-րդ չափաբաժնի համար «Արտադրող» դաշտում բացակայում է արտադրողի կազմակերպաիրավական ձևի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՎԱՐԴՄԱ ՍՊԸ-ի, որի հայտում՝

- 2-րդ չափաբաժնի համար «Մոդել» դաշտում լրացված է ապրանքի անվանումը,
- 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում» և «Արտադրող» դաշտերում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում տվյալ չափաբաժինների համար տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին:

ԷԿՈԿԱՌՈՒՅՑ ՍՊԸ-ի, որի հայտում՝

- 9-րդ, 10-րդ, 11-րդ և 15-րդ չափաբաժինների համար «Արտադրող» դաշտում բացակայում է արտադրողի կազմակերպաիրավական ձևի վերաբերյալ տեղեկատվությունը,
- 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար «Մոդել» դաշտում բացակայում է անհրաժեշտ տեղեկատվությունը,

1.3 19-րդ չափաբաժնում տեղի է ունեցել առաջարկվող նվազագույն գնի կրկնություն և հայտերը համակարգի կողմից մերժվել են:

1.4 18-րդ և 21-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները:

Իրականացված ամփոփման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝

➢ 19-րդ, 18 և 21-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

➢ Հիմք ընդունելով **ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/20** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանաքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները.

ՊՐՈՎԱՏՏ ՍՊԸ-ին

- Ներկայացնել Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև (հավելված 1.3), որտեղ կայքէջի հղումը կպարունակի պահանջվող տեղեկատվությունը,
- 20-րդ չափաբաժնում «Արտադրող» դաշտում լրացնել արտադրողի կազմակերպաիրավական ձևի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՎԱՐԴՄԱ ՍՊԸ-ին՝

- 2-րդ չափաբաժնի համար «Մոդել» դաշտում լրացնել պահանջվող տեղեկատվությունը,
- 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում» և «Արտադրող» դաշտերում ներկայացված տեղեկատվությունը համապատասխանեցնել տվյալ չափաբաժինների համար տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին:

ԷԿՈԿԱՌՈՒՅՑ ՍՊԸ-ին՝

- 9-րդ, 10-րդ, 11-րդ և 15-րդ չափաբաժինների համար «Արտադրող» դաշտում լրացնել արտադրողի կազմակերպաիրավական ձևի վերաբերյալ տեղեկատվությունը,
- 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար «Մոդել» դաշտում լրացնել անհրաժեշտ տեղեկատվությունը,

➢ Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ Գևորգ Հարությունյան

Անդամներ Սմբատ Այդինյան

Աննա Սարգսյան

Քարտուղար Ռոզա Մեհրաբյան